

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՍՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ
ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ ձեզ Բանակի օրվա կապակցությամբ. այն տոն է, որ նշում ենք ազգովի:

Հայոց ազգային բանակը պատվով է կատարում հայրենի սահմանների պաշտպանի իր առաքելությունը՝ խաղաղության պահպանման կռվան հանդիսանալով ոչ միայն մեր երկրի, այլև ողջ տարածաշրջանի համար:

23 տարիների ընթացքում հայոց ազգային բանակն իր մարտական պատրաստականությամբ, մարտունակությամբ և զգոնությամբ, արժանի հակահարված է տվել հակառակորդի բոլոր ոտնձգություններին, անառիկ պահել մեր սահմաններն ու ապահովել ժողովրդի խաղաղ կեցությունն ու անդորրը:

Հայոց բանակի զինվորներ՝ բանակի հզորության վրա են հենվում պետական քաղաքականություն իրականացնող այրերը: Ձեր անձնվեր ծառայությամբ ապահովում եք Հայաստանի Հանրապետության պետության անկախության պահպանում ու առաջընթացը: Մաղթում եմ ձեզ հայրենանվեր ծառայություն, անսպառ եռանդ բանակաշինության և նորոնոր ձեռքբերումներ մեր երկրի պաշտպանունակությանն ուղղված ձեր բոլոր ձեռնարկումներում:

Սիրելի՛ սյունեցիներ,

Շնորհավորում եմ ձեզ այս նշանակալից ու փառավոր տոնի առիթով, մաղթում բարձր տրամադրություն, խաղաղություն և բարօրություն: